ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորանքի խոսքը Հայոց բանակի կազմավորման 33-րդ տարեդարձի առթիվ

Սիրելի հայրենակիցներ, Հայոց բանակի ստեղծման օրը պատմական ու տոնական է յուրաքանչյուր հայ մարդու համար, քանզի մեր բանակի կազմավորումը վճռորոշ նշանակություն ունեցավ հայկական երկու պետությունների անկախության պահպանման ու հայ ժողովրդի անվտանգության ապահովման տեսանկյունից:

Մեր բանակը ծնվեց ու հասակ առավ մեզ պարտադրված ծանր գոյամարտերում եւ կարողացավ կոել պատմական հաղթանակներ՝ կանգնեցնելով հայ ժողովրդին բնաջնջելու եկած թշնամական բանակներին:

Հայոց բանակը հերոսաբար մաքառեց նաեւ Արցախյան վերջին պատերազմում, Հայաստանի Հանրապետության դեմ 2022 թվականին ձեռնարկված ռազմական գործողությունների ընթացքում՝ ծանր կորուստների գնով պաշտպանելով հայրենի երկրի սահմանները:

Հայաստանում դժվար է գտնել մի ընտանիք, որի զավակները մասնակցած չլինեն Հայոց բանակի կազմավորմանը, զինվորական ծառայությանը, ազատագրական ու պաշտպանական մարտերին՝ շատ դեպքերում տալով նաեւ թանկագին կորուստներ:

Հայոց բանակի մերօրյա զինվորները մեր ժողովրդի ծոցից ելած զավակներն են, ովքեր այժմ մարտական ծառայության մեջ ապահովում են մեր հայրենիքի խաղաղությունը, նրա արարչագործ ընթացքը:

Մենք հպարտ ենք մեր բանակով, մեր հայրենանվեր զինվորներով ու հրամանատարներով, մեր հերոսացած ու սերունդների հիշողության մեջ հավերժացած այրերով, որոնց սուրբ հիշատակի առջեւ խոնարհվում ենք ապրողներս:

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Հայոց բանակի կազմավորման 33-րդ տարեդարձի առթիվ, մաղթում քաջառողջություն, խաղաղ ու արարչագործ հայրենիք, համահայկական նպատակների իրագործում, մեր զինվորներին՝ խաղաղ ու անվտանգ ծառայություն:

Լավագույն ցանկություններով՝

ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար

Հովհաննես Հովեյան